կան նշաններին 'ի թուաբանութեան՝ այս-պէս նաև համագգային գրութիւն մի հաս-տատել սղագրութեամբ՝ փոխանակ բաղմ-ազգի այբուբենից իւրաքանչիւր ազգաց։

Իսալիոյ մէջ սղագրութեան այս եռան-դուն կուսակիցներէն մին, ազնուական և գիտուն երիտասարդ մը, նաւական զի-նուորութեան ասպ և ասպետական շքա-նշանով պատուեալ՝ սղագրութեան վարժ-պետ, Պ. Ռոկար Կրէքոյ, որ հիմնադիր և գլուխ է Ն.Էսպոյսի սղագրական Պար-բենոպեան – կաճարին, իրարանցս տուաւ մեզ, շնորհելով իւր ձեռնտուութիւնն՝ վերածելու այս Կապելլպէրկերի գրու-թիւնը Ֆրանսական լեզուի, յորդորե-լով նաւազգոյն յառաջադէմ չգտնուելու նաև յոյսմ մասին զարգացման՝ ազգի մը՝ որոյ գործունէութիւնն և 'ի լուսաւորու-թիւն դիմելու ջանքն և յարմարութիւնն 'ի մտաւորական ձիրս՝ գինքը քաղաքակրը-թեալ ազգաց սիրելի և յարգելի ընծայեր է։ Մեք իրեն և մեր փափաքանաց համա-ձայն գործելով՝ կը հրատարակենք նախ 'ի Հանդիսիս մասն առ մասն մեր վերած-մունքն Հայկական – Ղազդուրեան, պարզք Համարելով ատ հրապարակս մեր չը-նորհակալութիւնը մատուցանել առ Հե-դինակն իտալական – նաւային – սղագրու-թեան և խմբագրապետ Ղազդուրիին (La Stenografia) անուամբ լուսամիտ ասմա-թիրին, մաղթելով փափաքանք որ իւր սիրով մշակած այս արուեստն՝ փութով և յաջող զարգացումն գտնէ նաև մեր ազ-գին և ուրիշ արևելեան ժողովրդոց մէջ։

Հ. Ա. Թ.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴՐՈՒԹԵԱՆՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Սղագրութիւնն է սրուեստ մի, որ կ'ուսու-ցանէ՝ ըստ կարելւոյն համառօտ ժամանակի մէջ և 'ի փութագոյն ենթակայի գրել։

Փրանկիսկոս Քաւեր կապելլպէրկերի[1] գիւ-տէն վերջը՝ սղագրութիւնն՝ բանաւոր գրութեան յատկութիւն ստացաւ, ոչ միայն բառից կազ-մակերպութեան նկատմամբ, այլ և անոնց հա-մառօտագրութեան օրինքը։ Այս օրէնքներն ոչ են ըստ կամս սահմանուած, ինչպէս էին երբեմն Ֆիրոնեան[2] արագագրութեան մէջ կամ յունական նշանագրութեան և կամ Թէյլրի երկրաչափական համառօտագրութեան մէջ, այլ վերածեալ են կանոնաւոր կատարեալ գրութեան մի։

Այս Կապելլպէրկերեան գրութիւնս երկու գլխաւոր մասանց կը բաժնուի, որք են

Ա. Տեսական Սղագրութիւն

Բ. Գործնական Սղագրութիւն

Տեսականն կը պարունակէ այն սկզբունք-ներն և կանոնները, որովք բառերն կը գրուին։

Գործնականն կ'ուսուցանէ այն կերպերը, ո-րովք պատշաճ են 'ի գործ դրուիլ տեսական մասին ուսանդածներն. կամ տարբեր բացա-տութեամբ ըսելով, կը ցուցնէ թէ սղագրու-թիւնն ինչ նպատակաց կրնայ ծառայել։

Տեսականն կը պարունակէ իւր մէջ.

1. կազմութիւն բառից, 2. Համառօ-տութիւն բառից, 3. Ջեղչումն բառից։

Գործնականն կ'ամփոփէ իւր մէջ.

1. Սղագրութիւն յարաբերական, 2. Սը-ղագրութիւն ատեանական։

Տեսականին առաջին մասն կ'ուսուցանէ դը-բոյել բառերը ձայնագրապէս, այսինքն՝ ինչ-պէս որ կը հնչուին. և այս մասին ուսումն բա-ւական է՝ գաղափարաց պարզ հաղորդակցու-թեան համար. բայց սրագպրութեան բարձ-րագոյն աստիճանին հասնելու համար՝ անհրա-ժեշտ կարիւոր է նաև երկրորդ մասին ուսումն։

Այս երկրորդ մասին մէջ կ'աւանդուին բա-ռերը համառօտելու կանոններն. և համառօ-տելու աստիճանին և կերպին հաւանմամբ՝ համա-ռօտութիւնք երեք մասանց կը վերածուին, որք են.

1. Համառօտութիւնք այբուբենական տառից։

2. Համառօտութիւնք մասնիկներու.

[1] Ղրեալ 'ի Միւնիխ Պաւարիա, 'ի 1789 փեբրուար 8, մեռեալ անդ 'ի 1849 յանուար 4։

[2] Տիրոն՝ ազատագրեալն էր և դրագիր, որ հնարեց իւր անուամբ կոչուած Տիրոնեան նշանները, որք մնան մասամբ ըստ կամս որոշեալ ձեւերէ էին, առանց յատուկ կանոնների։

digitised by A.R.A.R.@

այսինքն՝ նախադրութեանց, ածանցմանց, վերջաւորով փոփոխմանց և լծորդութեանց։

3. Համառօտութիւնք բառից էական մասանց։

Այս վերջին բաժանումս երկու մասն ունի, որք են.

1. Տրամաբանական սղմունք, 2. փակագիրք։

Տեսականին երրորդ մասն կ'աւանդէ այն կանոնները, որովք իմաստի մը զանազան մասունքներն կը զեղչուին, և այն պարագաներն՝ որոց մէջ կարելի է այս զեղչումն կատարուիլ։

Այս ամէն կերպ համառօտութեանց վրայ, ինչպէս նաև գործնականին մասանց վրայօք՝ կարգաւ խօսելով յաջորդ գլուխներուն մէջ, պիտի ջանանք ըստ կարելւոյն պայծառ գաղափար տալ՝ իւրաքանչիւր մասանց այս սղագրական դրութեանս։

ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԲԱՌԻՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՅԲՈՒԲԵՆՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղագրութեան նշաններն կը տարբերին իրարմէ ոչ միայն իրենց ձևերով, այլ նաև մէկմէկէ ունեցած մեծութեամբ և դիրքով. որով ճշդիւ որոշելու համար զանոնք՝ հետևեալ չորս երևակայեալ գծերն սահմանուած են, որք կը կազմեն Սղագրութեան Տողաշարը։

Առաջին գիծ 1.	....	Առաջին օժանդակ.
Երկրորդ գիծ 2.	....	Երկրորդ օժանդակ.
Երրորդ գիծ 3.	————————	Հիմն կամ Հիմնական գիծ.
Չորրորդ գիծ 4.	....	Երրորդ օժանդակ.

Այն գիծն՝ որոյ վրայ կը հանգչին նշաններն գրեթէ միշտ, կը կոչուի Հիմնական գիծ և կամ պարզապէս Հիմն. իսկ միւսներն, որք նշանաց երկայնութիւնը կ'որոշեն, կ'ըսուին Օժանդակ կամ երկրորդական գծեր։

Առաջին գիծն՝ երկրորդէն, և չորրորդն երրորդէն՝ գրեթէ կրկին անգամ աւելի հեռաւորութիւն ունին, քան թէ երկրորդն երրորդէն։

Չորրորդ գիծը հիմնականէն բաժնող միջոցն՝ փոքրագոյն է քան զառաջինն երկրորդէն բաժնող միջոցը։

Կապելսպէրկերի դրութեան մէջ առաջին կարևոր և հիմնական սկզբունքն է հետևեալն.

Սղագրութիւնն՝ խօսելու ժամանակ հնչուած ձայնը միայն 'ի գրի կ'առնու, առանց ուշ դնելու ուղղագրութեան կանոնաց՝ որ և իցէ լեզուի մէջ։

Այս իրեն ձայնական դրութեան պատճառաւ՝ Կապելսպէրկերի դրութիւնն կոչուած է նաև Ձայնագրութիւն։

Համառօտագրութեան այս հիմնական օրէնքը դնելէն վերջը, հարկ կը համարինք հոս քանի մը կարևոր ծանօթութիւններ աւանդել համառօտիւ՝ հայկական լեզուիս տառերուն վըրայօք, որոց ձայնական յատկութեանց վրայ հիմնեալ է այս մեր դրութիւնն, և յետոյ ըստ կարգի խօսիլ սղագրութեանս այբուբենի կազմութեան և նշանագրաց վրայ։

Ա

ԱՅԲՈՒԲԵՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

Մեր լեզուին մէջ չորս տեսակ դասաւորութիւն կայ տառից, որք են. Ձայնաւորք, Երկբարբառք, Բազմաբարբառք, Բաղաձայնք։

Բաղաձայնք հինգ խմբի կը վերածուին, և են. Լերկք, Միջինք. Թաւք, Հագագայինք և Նայք. ըստ հետևեալ ցուցակին.

digitised by A.R.A.R.@

1. Ձայնաւորք. — ա, ե, է, ը, ի, յ, ո, ւ, օ (աւ, ով)։
2. Երկբարբառք. — աւ, եւ, իւ, ու, եա, այ, ոյ, եօ, ով։
3. Բազմաբարբառք. — եաւ, ուա, ուե, ուէ, ուի, ուո։
4. Բաղաձայնք. —
   1. Լերկք. — պ, կ, տ, ծ, ճ, զ, ժ, վ։
   2. Միջինք. — բ, գ, դ, ձ, ջ։
   3. Թաւք. — փ, ք, թ, ց, չ, ս, շ, ֆ։
   4. Հագագայինք. — հ, խ, ղ։
   5. Նայք. — լ, մ, ն, ր, ռ։

1. Ձայնաւորք. — Հայերէնի մէջ ո և օ ձայնաւորաց հնչումն ազգային մեծ մասին բերանը՝ անզանազանելի նոյնութիւն ստացած լինելով, օ ձայնին համար սահմանուած նշանն՝ ուղղագրութեանս մէջ կը ծառայէ նաև ո ձայնին համար։ Բայց որովհետև ոչ սակաւ գաւառական և մանաւանդ կեդրոնական Հայաստանի հնչմունքներն, (յայտ է՝ որ Արարատեան գաւառին և Բարձր Հայոց հնչմունքն ընդհանրապէս ընտրելագոյն և ճշգագոյն կը համարուի և նախապատիւ քան ուրիշ գաւառաց կամ գաղթականութեանց հնչմունքն), ո գիրը շատ ըզգալի կերպով կը զանազանեն օ գրին ձայնէն, հնչելով զառաջինն ու ո երկբարբառին գրեթէ համաձայն հնչմամբ, ուստի և ուղղագրութեանս մէջ (որ միայն արտաբերել ձայնին աչք կը դնէ) ո ձայնաւորը՝ այն գաւառաց համար կը նշանակուի ուո = վո՛ սեփական ձայնիւ՝ բառերու սկիզբը, իսկ բառերու մէջ օ գրին նշանով կը դրոշմուի։

Նոյն բանը պէտք է հաստատել նաև ե և է ձայնաւորաց հնչման նկատմամբ. վասն զի մինչդեռ բազումք գրեթէ զանազանութիւն չեն դներ այս երկու տառերուն հնչման մէջ, ուրիշ բազմաթիւք ալ իրաւամբ՝ զգալի կերպով կը զանազանեն էին յերկ և կարճ ձայնը՝ եին ամփոփ և երկարագոյն ձայնէն, (մանաւանդ երբ բառից սկզբնագիր լինի), հնչելով այս վերջինս գրեթէ իէ երկբարբառին ամփոփ հնչմամբ։ Ուստի նաև մենք այս վերջին հնչման համեմատ նշան մը սեփականելով ե ձայնին, կը դասաւորենք զայն երկբարբառներուն մէջ։

Դարձեալ, ուղղագրութեանս մէջ ւ ձայնաւորին առանձինն նշան չենք սահմանած, որովհետև ոչ երբեք առանձինն կը հնչուի՝ իրեն սեփական ձայնիւ մը. այլ կը գտնուի կամ բառից սկզբնագիր (և այն՝ ամենաքիչ անգամ և այժմ անսովոր եղած) ճ հնչման տեղ գրուած, (զոր օրինակ, ւիւսել, ւիւթեղ, և այլն, փոխանակ ճիւսել, ճիւթեղ), և այն ատեն կը նշանակուի ճ տառին համար սահմանուած նշանով. և կամ կը գտնուի ա, ե, ի տառերէն վերջը, և անոնց հետ միանալով կը կազմէ աւ, եւ, իւ (զոր օրինակ, կաւ, արեւ, ճովիւ) երկբարբառները, որք կը հնչուին ավ, եվ, իվ, ուստի ւ-ին ձայնն այս պարագայից մէջ տառին նշանով կը դրոշմուի։ Այսպէս նաև երբ ւ տառն պատահմամբ (հոլովմանց և ձայնաւորաց լծորդաձայն փոփոխմանց մէջ) առանձինն մնալու լինի, դարձեալ վի ձայն կը հանէ, ուստի և վի նշանով կը դրոշմուի. զոր օրինակ ճոգւոյ = ճոգվոյ, տուչութիւն = տըւչութիւն = տըվչութիւն, և այլն։ Վերջապէս ւ տառն կրնայ գտնուիլ նաև ո ձայնաւորէն վերջը, և կը հնչուի ու պարզ ձայնով, որոյ համար սեփական նշան մի սահմանուած է։

Ծանօթ է անշուշտ բազմաց նաև յ և ճ տառից վրայօք դեռ ևս անլոյծ տեսական խնդիրն՝ անոնց ձայնաւոր և կամ բաղաձայն լինելուն նկատմամբ. բայց այդ քերականական խնդիրն՝ բնաւ վերաբերութիւն չունի ուղղագրութեանս այբուբենին դասաւորութեան հետ. վասն զի մեզի համար ըստ գործնականին խնդիրն լուծուած կը համարուի. ուստի մենք ճ տառին առանձին նշան մը սահմանեցինք, որովհետև հագագային գրերու կը վերաբերի. իսկ յ տառն ձայնաւորաց մէջ դասելով՝ իրեն սեփական նշան չսահմանեցինք։ Եւ յիրաւի, յ տառն կը գտնուի կամ բառերու սկիզբը, և այն ատեն փափուկ ճ ձայն կը հանէ, որով նաև ուղղագրութեան մէջ ճ գրին նշանով կը դրոշմուի. և կամ կը գտնուի ա և ո գրերէն վերջը, և այն ատեն անոնց հետ միացած՝ կը կազմէ այ և ոյ երկբարբառներն, և որովհետև վերջիններս գրեթէ աի և ոի հնչմունքներն ունին, ուստի նաև նոյն տառից համար սահմանուած նշաններով կը գրուին. իսկ եթէ ոյ իրեն հետևորդ բաղաձայն ունենայ՝ կը փոխուի և կը հնչուի մերձաւոր ուի ձայնին, որով և նոյն ձայներու համար որոշուած նշաններով կը նշանակուի. իսկ երբ յ գիրն բառերու վերջը մնայ՝ չի հընչուիր՝ անձայն ըլլալով, որով և ուղղագրութեան մէջ չի գրուիր։ Այսպէս ուրեմն յարութիւն = ճարութիւն, յոքնակի = ճոքնակի, Հայաստան = Հաիաստան, ճոյակապ = ճոիակապ, բոյն = բուին, գոյն = գուին, մարդոյ = մարդո, մարդոյն = մարդուին, և այլն։

2. Երկբարբառք. — Երկբարբառներէն աւ և ով իրենց սեփական ձայն չունենալնուն համար՝ նաև ուղղագրութեանս մէջ յատուկ նշան չունին. որովհետև աւ կամ կը հնչուի ավ ձայ-

digitised by A.R.A.R.@

նիւ, զոր օրինակ, հասաւ, աւաղ, աւեստիս, և այլն, և այն ատեն կը գրուին ա և վ տառից նշաններով. և կամ օ կը հնչուի, զոր օրինակ կարաւղ = կարօղ, բաւաւղ = բաւօղ = բաւօղ, և այլն, և այն ժամանակ կը գրուին օ ձայնին նշանով։ Նոյնպէս նաև ով երկրարառն՝ միւռ հնչման մէջ հաւասար է օ ձայնին, զոր նախդիք, (ինչպէս նաև մէջ պայօր), կը գործածէին օտար ազգաց երկար օ գրին տեղ. զոր օրինակ Սափփով = Սափփօ, յովտ = յօտ, Սողոմոն = Սողօմոն, ցաւովք = ցաւօք, և այլն, ուստի կը գրուին նաև օ տառին նշանով։ Ով երկրարառն ա նուազց գործածական [1] հոլովներու մէջ, (Դ. Հաւոլովն, ըստ Տարբաց Քերականութեան), կը հնչուի ոտ և վ յատուկ ձայներով, ուստի և

աղագրութեան մէջ նոյն գրերուն նշաններով կը գրուին։

Դարձեալ, երկրարառաներէն եւ նախնեաց գրութիւնն՝ ըստ այժմեան ոճիկի և առհասարակ եղած հնչմամբ եօ ձայնիւ կը հնչուի, ուստի նաև աղագրութեան մէջ եօ ձայնին սեփական նշանով կը գրուին։ Իսկ երբ եւ հընչուի եվ, զոր օրինակ, արեւ, ձեւ, նոյն ժամանակ եւ և վ նշաններով կը գրուին, ինչպէս վերն բաւեցաւ։

3. Բնագրաբարեան. — Աղագրութեանս մէջ բաղմաբարբառ կամ կրկնակ երկրարառը բաւուածներն տեղի չունին. վասն զի իրենց հնչմունքն բաղադրեալ ձայներէ կազմուելով՝ իւրաքանչիւր ձայն՝ իւր նշանագրով կը գրուին. զոր օրինակ.

եաւ = եավ.	զոր օրինակ,	բարեաւ = բարեավ.	
եաւ = եօ	»	բարեաւք = բարեօք.	
ուա = վա	»	Աստուած = Աստված.	
ուե = վե	»	պատուեցան = պատվեցան.	
ուէ = վէ	»	պատուէին = պատվէին.	
ուի = վի	»	պատուիրեաց = պատվիրեաց.	
ուո = վո	»	վարձուոր = վարձվոր։	

Իսկ երբ հարկ լինի առանձինն հնչել այս բաղմաբարբառները, զոր օրինակ՝ բայից անկատար ժամանակներուն մէջ՝ ա նշանին, երրորդ նշանին՝ ի նշանին, ու և ե, ու և ի, ու և ո, և այլն, ձայներով։

4. Բաղաձայնք. — Ինչպէս քիչ մը վերը գրուած տառից ցուցակին մէջ կը տեսնուի նշանակուած, բաղաձայն գրերէն ոմանք լերկ են, այսինքն՝ բարակ և աւղ, ոմանք թաւ են, այսինքն՝ հաստ և հրկար, և ոմանք այս երկուքին միջինն, այսինքն լերկերէն աւելի հաստ և երկար, և թաւերէն աւելի բարակ ու աւղ են։

Աղագրութեանս մէջ այս երեք դասաւորութեանց իւրաքանչիւր տառերն իրենց սեփական նշան ունին, որոնք ըստ կանոնի կը գրուին։ Ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք։ Բայց ընդհանրապէս, մանաւանդ ուր որ իմաստից երկդիմութեան վախ չկայ. կրնան միջին գրոց համար սահմանուած նշաններն՝ նաև թաւ գրերուն նշանաց տեղ գործածուիլ. վասն զի այժմ ըստ հասարակ եղած ազգային ազատաղ հնչման, կամ հղագրոյն ևս ըստ լոյ ըստ մեծի մասին [2] ազգայնոց հնչման, միջին և թաւ գրերն խառնակցութեան մէջ գրեթէ նոյն հնչմամբ կ'արտաբերուին, առանց մեծ զանազանութիւնն մը զգալի ընել տալու. զոր օրինակ.

1. Գրաբառի հոլովմանց մէջ սեռականին միւռ կը ձեւանայ գործածական. ուր որ սեռականն՝ ա կը վերջանայ, գործիականն կամ սեռականին պէս կը լինի, (զոր օրինակ, ղաղ, ղաղաւ, ղաղաւս, և այլն), և կամ՝ կը կազմուի սեռականին վերայ՝ գիրն ա-ներքնելով, որ գործածականներու իւր քով գալով՝ ի կը փոխուի. (բաղաձայն տառիւ վերջացած սեռականներուն քով է գիրն կ'ասելու գործիական կազմելու համար). զոր օրինակ, խոյ, խոյոս, խոյոսնէ = խոյոսի, և այլն։ Զորրորդ հոլովման մէջ վերջնաւորեալ գործիականներուն վերջը միւռ հոլովմանց մէջ եղած սա, իս, և այլն, վերջնաւորութեանց տեղ գրուած է. վասն զի եթէ չորրորդ հոլովման մէջ ալ ս նշանագրին քով՝ ա գրուելու լինէր՝ պիտի չգիտուէր հինգերորդ հոլովման սա վերջնաւորութեան ձայնին հնչս։

2. Իսա ինձ հարն կ'ասենք. վասն զի բոլորովին ընդհանրական է թուականներ կամ լաւ ևս՝ երբեմն գաւառաբանքներին հնչումն. որոնք թէպէտ ասելի իրաւամբ փոխանակ դիլի և թաւ գրերու, գրեթէ նոյնանգամ կը հնչեն դիլի և ի՛ր՝ գրերը. որք լծորդ են նաև բան նախնեաց գրութեան, և հանմանամ կանոնի հնչման ասէն հնգերորդական ճեռգին լեզուաց։ Ուստի իրենց համար ըստ ազգագրութեանց՝ հոկական տառերն պիտի բաժնուին հետեւեալ կերպով.

Սուղք. — ա, է, ո, ե, ի, ռ, ֆ, —։
Երկարք. — փ, ք, թ, ց, ւ, ս, ւ, վ։

Որով՝ բ, գ, դ, ց, ղ տառից նշանների պիտի սեփականուին ֆ, ֆ, ֆ, ֆ, ղ տառից՝ միայն՝ միջոցեւս դ, ֆ, դ, ֆ, ֆ տառից համար միայն որոշուած նշանների՝ պիտի ծառայեն նաև ֆ, ֆ, դ, ֆ, ղ տառերու հնչման համար։

Վերը հնչման նկատմամբ միայն՝ թէպէտ ասելիք իրաւամբ ըստ ժամանակներու, կը դասաւորուինք բացարձակապէս՝ ոչ բաղմաթիւ. գրոց և օրագրոց մէջ երբեք երբեք տեսնուած նոյնպիսի փոփոխութիւն մը նաև՝ ի գրքութեան, որ հակառակ է նախնեաց ազգագրութեան և զոր իրրև ազգագրական սխալմանց կ'սխորժինք համարել. ինչպէս ոն օրինակի համար հետեւեալներն. գոյոց փոխանակ գոյոց, գրեաղանամ՝ փոխանակ գրաղանամ, ոնոց փոխանակ կնոց, ծանոյցանամ՝ ի՛ փոխանակ ծանոյցանամ՝ ի, ֆանիմամ՝ ֆանիմամ, ֆոփամ՝ ֆոփամ, և այլն։

digitised by A.R.A.R@

բազում և փազում, ընակարան և փնակարան, բոլոր և փոլոր,
գանգատիմ և քանքատիմ, գնել և քնել, գուրպայ և քուրպայ,
դարձընել և թարցընել, դնել և թնել, դեւ և թեւ, ձիւն և ցիւն,
ձրի և ցրի, ձող և ցող, ջուր և չուր, ջնջել և չնչել, ջանք և չանք, և այլն։

Հագագային գրերուն մէջ, որ են հ, խ, ղ, ըստ ասոնցմանի փոփոխութեան՝ խ միջին է ընդ հ և ընդ ղ, որով և չատ անգամ լծորդ ընդ հ՝ ոչ միայն ռամկին հնչման մէջ [1], այլ նաև ըստ նախնեաց գրութեան, ուստի և հնչման. ինչպէս հետեւեալ բառից մէջ նահապետ և նախապետ, ախուվախ և ահուվահ, հաղրք և խաղրք, խոյ և հոյ, ահ և ախ, հոր և խոր, թոնիւրոն և թոխուրոխ, ճախճախուտ և ճահիճ, ռախաք և ռահաք, և այլն. բայց որովհետև խ՝ ըստ արդեայց հնչման մերձաւորագոյն է ղ, ուստի սղագրութեանս մէջ կըրնան մի և նոյն նշանով դրոշմուիլ խ և ղ, թէպէտ և երկուքն ևս իրենց սեփական նշանն ունին, ինչպէս պիտի տեսնենք քիչ վերջը։

Նայ տառերէն իւրաքանչիւրն իրեն յատուկ նշանն ունի սղագրութեանս մէջ։

Ուստի մինչև ցայժմ աւանդածնէս հետեւանք կ'ելնէ՝ որ Սղագրութեանս մէջ սեփական նշան ունեցող

6 Ձայնաւորք կան, որ են ա, է, ը, ի, օ, ու։
6 Երկարբառք կան, որ են իւ, եա, այ, ոյ, եօ, եւ։
29 Բաղաձայնք կան, որ են.
- 8 Լերկք. պ, կ, տ, ծ, ճ, ֆ, ժ, վ։
- 8 Մէջինք. բ, գ, դ, ձ, ջ, ս, շ, փ։
- 5 Թաւք. փ, ք, թ, ց, չ։
- 3 Հագագայինք. հ, խ, ղ։
- 5 Նայք. լ, մ, ն, ր, ռ։

Ուստի ընդ ամէնն 41 նշանագիրք կը կազմեն սղագրութեանս այբուբենը։ — Ուրիշ յօդուածի մը կը թողունք՝ սահմանելու իւրաքանչիւր գրի՝ յատուկ սղագրութեան նշանն։

1. Ցայսմի է ուրեմն Փոքրն Պօղոս գաւառականաց հ և ի տաւոց փոխադարձ ազաւազմունքն, ինչպէս նաև Վանայ և Բարիշոյ ազգայնոց կեդրոնական Հայաստանի՝ նդեսորինակ հնչումն, որոց հմար բանասիրի մը վերկայութիւն (Գար. Վ. Սրուանձտեան՝, Հմտ. Հոպով)

կը հաւատամ թէ իրենց գաւառային կոկորդական ձեւն յատաւ կու գայ այդորինակ հնչումն. բայց և այսու հանդերձ չի գիտեր այս տեսակ հնչմամբ՝ ուղղագրել նախնեաց նահապետ գրութիւնն՝ ի նահապետ։

ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԵՍՈՒԹԵԱՆՍ ԶՄԱՐԻԲԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵՆԷ.

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՑ

Ըստ փոփոխանաց մեծահամբաւ բարեկամի ուրումն՝ կը փութանք յարել յաւարտ Տեսութեանս զմարիբասեան աւանդութենն ըստ Մ. Խորենացւոյ՝ և զհամառօտ բովանդակութիւն զէթ էական մասանց նորին՝ ի դիւրութիւն ազգասէր և ճշմարտասէր հնախուզից, որոնք կ'ուզեն յայտնել իրենց կարծիքը զտեսութիւնէս մերմէ։ Սակայն փափաքելի էր մեզ եթէ յամբողջութեան տեղ և յապացուցութիւնս զկոյս առեալ հատանէին իրենց վճիռը, որոց տեղիքն և էջերը կը ցուցանենք, քան թէ ի հակիրճ ծրագիրս՝ զոր իբրև կամաք ինչ ընծայեմք երկասիրութեանս։

digitised by A.R.A.R.@